Հավելված N1
2017թ. Կնքված
N ՇՀՇՁԲ-15/1-ՀՎԿԱԿ-2016-54-01 պայմանագրի

**Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց***

<table>
<tr><th>Չ/հ</th><th>Ձեռք բերվող ծառայության անվանումը</th><th colspan="2">Տեխնիկական բնութագիր</th><th>Չափման միավորը</th><th>Քանակը</th></tr>
<tr><td rowspan="3">1</td><td rowspan="3">Ինտերնետային կապի ծառայություն</td><td>Պայմաններ</td><td>MPLS կամ համարժեք օպտիկամանրաթելային մալուխով, երաշխավորված երկկողմանի սիմետրիկ կապի տրամադրում (ՀՀ և ՀՀ տարածքից դուրս այցելած կայքերի համար), անսահմանափակ ծավալով հետևալ հասցեյում՝ ք.Երևան, Դավիթ Մալյան 37:<br>Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում:<br>Ինտերնետային կապի երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև 1:1 օգտագործման գործակցով (ք. Երևան, Դավիթ Մալյան 37) հասցեի համար 30 մբիթ/վ թողունակությամբ:<br>Անհրաժեշտության դեպքում՝ պահուստային միացման առկայություն ապահովելով համարժեք արագագործությունը, հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում, սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն, օգտվողի կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերծանման տրամադրում: Հոստինգի տրամադրում ենթադոմեյներով առնվազն 10 ԳԲ տարածքում, MySQL5.0 և ավելին տվյալների հենքով, կառավարման WEB ինտերֆեյսով, վիճակագրությամբ, PHP5.0 և ավելի, ինչպես նաև CGI/Perl ապահովմամբ, FTP և SSL առկայությամբ, դինամիկ DNS-ի ծառայություն:<br>Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում, կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի <<on-line>> վերահսկման հնարավորություն: Մատուցողի կողմից գրանցված իրական (Public) 4-րդ տարբերակի Այ Փի հասցեների (Ipv4) տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով)-առնվազն 5 հատ, բոլորը մեկ ցանցից:<br>Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում ՝ ըստ պահանջի:<br>Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անմիջապես տեղեկացում պատվիրատուի համակարգչային մասնագետին:</td><td rowspan="3">ամիս</td><td rowspan="3">1</td></tr>
<tr><td rowspan="2">Որակական պահանջներ</td><td>Տրամադրվող ինտերնետ կապը չպետք է խափանվի ծառայության մատուցման ընթացքում, մեկ ամսվա կտրվածքով, ոչ ավելի, քան 2 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում ինտերնետ կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով:</td></tr>
<tr><td>Մեկ ամսվա ընթացքում ինտերնետ կապը չպետք է խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով ինտերնետ կապի խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում ինտերնետ կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար: Ինտերնետ կապի արագությունը չպետք է շեղվի պահանջված արագությունից ավելի քան 10%-ով:</td></tr>
<tr><td colspan="6">Ծառայության մատուցման ժամկետ</td></tr>
<tr><td colspan="3">Սկիզբը</td><td colspan="3">Ավարտը</td></tr>
<tr><td colspan="3">Ինտերնետային ծառայությունը պետք է մատուցվի պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված ոչ ուշ, քան 10-րդ աշխատանքային օրվանից սկսած: Ծառայության մատուցման սկիզբ է համարվում Կատարողի կողմից տրամադրվող կապից Պատվիրատուի՝ օգտվելու հնարավորություն ունենալու օրը:</td><td colspan="3">Մինչև 31.12.2017թ.</td></tr>
</table>

*Ծառայությունները ամբողջ ծավալով մատուցելու դեպքում փաստացի վճարման գումարը վերահաշվարկվում է տվյալ ամսվա ընթացքում ծառայության փաստացի մատուցման օրերի քանակի համապատասխան: